

Գրախոսական

**ԺԴ. 00. 12 «Ստոմատոլոգիա» մասնագիտությամբ բժշկական գիտությունների
թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված Գագիկ Արամի
Խաչատրյանի «Մանկական հասակում ատամների կարիեսի և նրա
բարդությունների բուժման արդյունավետության համեմատական վերլուծությունը»
թեմայով ատենախոսության վերաբերյալ**

Ատամների կարիեսի կանխարգելման խնդրի անհրաժեշտությունը ներկայումս հանդիսանում է արդիական: Աշխարհում մնայուն ատամների կարիեսի տարածվածությունը 12 տարեկան երեխաների մոտ տատանվում է 40-98% սահմաններում, իսկ ուժգնությունը տատանվում է տարբեր մակարդակներով ըստ ԱՀԿ-ի՝ ցածրից մինչև շատ բարձր: Կարիեսով հիվանդացության բարձր մակարդակը փոխկապակցում են կլիմաաշխարհագրականառանձնահատկությունների, սոցիալ-հիգիենիկ գործոնների, անկանոն սննդակարգի, ջրում և վերնահոդում ֆտորի ցածր քանակության հետ: Ավելի հաճախակի կարիոզ ախտահարումները առաջանում են այն ժամանակ, երբ ընթանում է օրգանիզմի ձևավորումը և աճը: Ըստ տարբեր հեղինակների, 7-12 տարեկան երեխաների մոտ առավել հաճախակի են ախտահարվում է վերին և ստորին ծնոտների առաջին մնայուն աղորիքները ի համեմատ մյուս ատամների: Ատամների կարծր հյուսվածքների ռեզիստենտականության բարձրացման համար, նաև էմալի կառուցվածքի վերականգման և կարիոզ պրոցեսի կայունացնելու համար անհրաժեշտ է տեղային պաթոգենետիկ թերապիա, որն իր մեջ կընդգրկի ռեմիներալիզացնող և ֆտորապարունակող միջոցների օգտագործումը: Սակայն բացակայում են և բավարար մշակված չեն ռեմիներալիզացնող թերապիայի արդյունավետությունը բարձրացնող չափորոշիչները վաղ մանկական հասակի կարիեսի դեպքում:

Ուսումնասիրության արդիականությունը կասկածից վեր է՝ կապված հեղինակի կողմից կատարված հիվանդների վերականգնողական ժամանակակից բուժման մոտեցումների հիմնարար փոփոխությունների և բարելավման հետ:

Հեղինակի կողմից առաջին անգամ իրականացվել է դենտինի խորը ֆտորացման դենտինհերմետոզացնող հեղուկի և Գլուֆտորէդ նյութի կիրառման հեռակա արդյունքներ գնահատումը կաթնատամների և մնայուն չձևավորված արմատներով ատամների պլոմբավորման ժամանակ, ստացվել են մինիմալ ինվազիվ եղանակներով մշակման ժամանակ կիրառվող տարբեր պլոմբանյութերի արդյունավետության համեմատական բնութագրերը:

Ատենախոսությունը ներկայացված է համակարգչային տպագրության 110 էջի վրա, պատկերազարդված է 18 նկարով, թվային տվյալները ամփոփված են 5 աղյուսակներում: Բաղկացած է ներածությունից, գրականության ակնարկից, հետազոտության նյութը և մեթոդները գլխից, սեփական հետազոտության արդյունքների երկու գլուխներից, եզրակացությունից, եզրահանգումներից, գործնական առաջարկություններից և 143 աղբյուրներ պարունակող գրականության ցանկից: Ատենախոսության թեմայով հրապարակվե՛ են 5 հոդվածներ արտասահմանյան և տեղական գիտական հանդեսներում, լիովին արտացոլում են աշխատանքի հիմնական բովանդակությունը:

«Գրականության ակնարկ» գլխում մանրամասն ներկայացված են վերջին հինգ տարվա աղբյուրների վերլուծված արդյունքները:

Նյութը և մեթոդները ժամանակակից, տեղեկատվական են, համարժեք են առաջադրանքներին, ինչը թույլ է տվել հեղինակին ստանալ նոր գիտական տեղեկատվություն և փաստեր: Հետազոտությունն իր մեջ ներառել է կլինիկական և լաբորատոր փուլեր:

Սեփական հետազոտության արդյունքները շարադրված են երկու գլուխներում՝ արդյունքների մանրամասն վերլուծությամբ:

Հետազոտության մեջ օգտագործված էմալի ինֆիլտրացիայի մեթոդը կարիեսային վնասվածքների բուժման այլընտրանքային մեթոդ է, որը հնարավորություն տվեց մեկ այցելության ընթացքում ստանալ լավ արդյունք՝ էմալի մակերեսի գույնի, փայլի և հարթության վերականգնմամբ: Հետազոտությունները հաստատել են ստացված արդյունքի կայունությունը ժամանակի ընթացքում, ընդ որում ամենաօպտիմալ արդյունքը գրանցվում է ինֆիլտրացիայից 8 շաբաթ անց:

Ատամների կարծր հյուսվածքների նախապատրաստումը և քիմիական մշակումը կարիեսային ախտահարումների դեպքում, որոնց նպատակն է լեցավորումը, հանգեցնում է ատամների կարծր հյուսվածքների կորուստի և թուլացման, ինչը վերջնականապես կարող է բերել բարդ թյունների զարգացման: Խորը ֆտորացման մեթոդի տեխնոլոգիան բավականին պարզ է, չի պահանջում մեկուսիչ տակդիրների տեղադրում: Խորը ֆտորացումը տալիս է լավ համեմատական արդյունքներ կարիեսային խորը ախտահարումների բուժման համար երկարաժամկետ հեռանկարում տարբեր ֆտորացման նյութերի կիրառման ժամանակ:

Պոլպիտները, որոնք հայտնաբերվում են երեխաների մոտ, 50% դեպքերում հանդիսանում են ժամանակավոր ատամների կարիեսի հիմնական բարդություն և զարգանում են որպես սկզբնական-խրոնիկ գործընթաց, և որպես բուժման եղանակ վիտալ պուլպոտոմիայի դեպքում հետազոտողի կողմից առաջին անգամ ուսումնասիրվել և ապացուցվել է հայրենական արտադրության BC Calcium Hydroxide –ի արդյունավետությունը, հանդիսանում է որպես այլընտրանքային, ավելի մատչելի արժողությամբ և կարող է հանդիսանալ ընտրություն վիտալ ամպուտացիայի համար՝ ապեքսոգենեզի հասնելու նպատակով:

Կատարվել է լեցանյութերով կաթնատամների վերականգնման արդյունքների կլինիկական համեմատական գնահատում՝ հիմնվելով FDI -ի կողմից հաստատված G. Ryge-ի (1980 թ.) չափանիշների վրա:

Կատարված հետազոտության ծավալը բավարար է եզրակացությունները և գործնական առաջարկությունները հուսալիորեն հիմնավորելու համար: Ատենախոսության դրույթները, եզրակացությունները և գործնական առաջարկությունները լիովին հիմնավորված են և բխում են աշխատանքի բովանդակությունից:

Սահմանված նպատակի նվաճումը և բոլոր հետազոտական խնդիրների լուծումը թույլ են տալիս Գագիկ Արամի Խաչատրյանի ատենախոսությունը համարել լիարժեք ավարտված աշխատանք:

Սեղմագիրը ներկայացված է մանրամասն և արտացոլում է ուսումնասիրության հիմնական բաժինները:

Ատենախոսությունը գրված է գրագետ գրական լեզվով և կարդացվում է հետաքրքրությամբ:

Դրա հետ մեկտեղ, կցանկանայի հեղինակին տալ մի շարք հարցեր.

1. Ի՞նչով է պայմանավորված ատամների էմալի ապահանքայնացումը բրեկետներ կրելու դեպքում՝ պացցիցենտի բերանիխոռոչի հիգիենայով, թե բրեկետների վրա ջերմային գրգռիչների ազդեցությամբ:


2. Կլինիկական ի՞նչ չափորոշիչներով եք դուք առաջնորդվել Տրիոքսիդենտի կիրառմամբ կակղանի հատման ժամանակ:

3. Ի՞նչով է տարբերվում խորը ֆտորացման եղանակը դասական ֆտորացումից:

Եզրակացություն.

Այսպիսով, ԺԴ. 00. 12 «Ստոմատոլոգիա» մասնագիտությամբ բժշկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված Գագիկ Արամի Խաչատրյանի «Մանկական հասակում ատամների կարիեսի և նրա բարդությունների բուժման արդյունավետության համեմատական վերլուծությունը» թեմայով ատենախոսությունը գիտա-գործնական աշխատանք է, որը պարունակում է արդիական գիտական խնդրի նոր լուծում, ինչը մեծ նշանակություն ունի ստոմատոլոգիայի համար, լիովին համապատասխանում է ՀՀ ԲԿԳԿ-ի պահանջներին, իսկ ինքը՝ հեղինակը, արժանի է բժշկական գիտությունների թեկնածուի հայցվող կոչմանը:

Պաշտոնական ընդդիմախոս՝ ԵՊԲՀ թերապևտիկ ստոմատոլոգիայի ամբիոնի վարիչ,
բ.գ.դ., պրոֆ.



Լազար Կառլենի Եսայան

Պաշտոնական ընդդիմախոս պրոֆ. Լազար Կառլենի Եսայանի ստորագրությունը հաստատում եմ:

ԵՊԲՀ գիտական քարտուղար



պրոֆեսոր Տ.Գ.Ավագյան